

ՏԵՂԵԿԱԹԵՐԹ 6 (նոյեմբեր 1993 թ)

ՊԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հունիսի 15-ին հորհրդի 7-րդ նիստում դիտարկվեց ՀՄՄ ատենապետ պրն. Վ.Օհանյանի հրաժարականի դիմումը: Շնորհակալություն հայտնելով պարտաճանաչ աջխատանքի համար հորհուրդը բավարարեց նրա խնդրանքը: Նոր ատենապետ ընտրվեց պրն. Ս.Դալալյանը (Երեվանի պետական համալսարան, երկրաչափության և հանրահաշվի ամբիոնի ղոցենտ): հորհուրդը քննարկեց ՀՄՄ ֆինանսական վիճակը և սահմանվեց անդամավճարների նոր չափսը: Հաստատվեցին նաև ՀՄՄ դիմող նոր անդամները:

*Նույն օրը ՀՄՄ ընդհանուր նիստում լսվեց պրոֆ. Ն.Ենգիբարյանի (Բյուրականի աստղադիտարանի մաթեմատիկական ֆիզիկայի կենտրոն) "ՓԱԹԵԹԻ ՏԻՊԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ՍԻՆԳՈՒԼՅԱՐ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՌԿԱՅԻԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ" թեմայով ղեկուցումը:

*Հուլիսի 13-ին հերթական ընդհանուր գիտական նիստում լսվեց դոկտ. Ս.Գրիգորյանի (մաթեմ. ինստիտուտ) ղեկուցումը հետևյալ թեմայով՝ "ՀԵԼՍՈՆԻ ՄԻ ՊՐՈԲԼԵՄԻ ՄԱՍԻՆ":

- ՊԻՏՈՒԹՅՈՒՆ Նշանակված են ՀՄՄ ներկայացուցիչներ տարբեր հաստատություններում.
- Պետական համալսարան.....Տիգրան Հարությունյան;
 - Ճարտարագիտական համալսարան.....Լևոն Գևորգյան;
 - Մաթեմատիկայի ինստիտուտ.....Արտակ Պետրոսյան;
 - Ինֆ.և ավտ.պրոբլ.ինստ.....Արթուր Ավետիսյան;
 - Մանկավարժական ինստիտուտ.....Աշոտ Գևորգյան;
 - Սեյսմիկ անվտանգ.ապգ.կենտր.....Գարրի Վարդապետյան;
 - Մոսկվա (հայկ.ներկայացուցչություն).....Ռուբեն Սաֆարյան;
 - Ֆրանսիա (Փարիզ-VI համալսարան).....Ֆիլիպ Փիլիպոսյան:

Ներկայացուցիչների միջոցով կարելի է լուծել ՀՄՄ հետ առնչվող բոլոր հարցերը:
*Շարունակվում է հայ մաթեմատիկոսների տվյալների բանկի ստեղծման նպատակով բաժանված հարցաթերթիկների ետ ընդունումը: հստորվում է բոլորին լրացված թերթիկները վերադարձնել ՀՄՄ գրասենյակ:

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Պրն. Զեյնա Թիմուրյանը, Ալբերտայի համալսարանից (Կանադա), ցանկանալով դառնալ ՀՀՄ-ի անդամ, նվիրել է Միության կարիքների համար \$100; Պրն. Ալեքսանդեր Քումջյանը Նեվադայի համալսարանից (Ռինո, ԱՄՆ) ուղարկել է \$50 չեկ: Շնորհակալություն ենք հայտնում մեր հայրենակիցներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Դեկտեմբերի 2-ին (հինգշաբթի), Ժ.13.30 նշանակված է ՀՄՄ ընդհանուր գիտական նիստը: Զեկուցող՝ պրոֆ. Նորայր Առաքելյանը (Պետ. համ.).

ԱՆԱԼԻՏԻԿ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՎԱՅԵՐՇՏՐԱՍՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկուցումից հետո կկայանա հորհրդի նիստ:

† Եռեսունչորս տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՄՄ-ի անդամ, Երկրաբանական ինստիտուտի ավագ գիտաշխատող ֆ.-մաթ. գիտ. թեկն. Օնիկ Մարտիրոսյանը: հորին ցավակցություններ ընտանիքին և մերձավորներին †

ՀԱՎԵԼՎԱԾ Այս համարում շարունակում ենք հրապարակել ՀՄՄ դիմող և հորհրդի կողմից հաստատված անդամների ցուցակը (ըստ ներկայացված դիմումների ժամկետի): Տվյալների փոփոխությունների դեպքում խնդրում ենք տեղեկացնել Միության գրասենյակ: